**Արձանագրություն № 3**
**№075/GArm/26_5.4_026/17.02.26 ծածկագրով**
**Մրցակցային ընտրության հանձնաժողովի**

**ք. Երևան** **17 մարտ 2026թ.**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մակարյան, Հ. Յումուշաղցյան, Կ. Մինասյան, Տ. Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բարսեղյան

## 1. Մասնակիցների որակավորման գնահատման նիստ

«Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղի ցածր ճնշման ստորգետնյա գազատարի վթարային հատվածների վերատեղադրում» օբյեկտի նորոգման աշխատանքների ձեռքբերման համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հայտարարաված №075/GArm/26_5.4_026/17.02.26 ծածկագրով մրցակցային ընտրությանը մասնակցել են՝ «Արթշինստրոյ», «Գայաաթ» և «Մ.Ո.Գ.-Շին» ՍՊԸ-ները:

Մրցակցային ընտրության հանձնաժողովը ուսումնասիրեց «Մ.Ո.Գ.-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և արձանագրեց, որ մասնագիտական գործունեության և փորձառության չափանիշի գնահատման համար՝ ներկայացրած հայտի հավելված 3.1-ով և 3.2-ով ցույց է տրվել Վրաստանի Հանրապետության Ախալցխե քաղաքում գտնվող հյուրանոցային համալիրի տարածքը սնուցող միջին ճնշման գազատարի կառուցման աշխատանքների կատարում:

«Մ.Ո.Գ.-Շին» ՍՊԸ-ն որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է վերը նշված աշխատանքների համար 08.04.2024թ. կնքված թիվ Բ 0084/24 պայմանագրի, օբյեկտի նախագծի, նախահաշվի և այդ պայմանագրի 06.06.2024թ.թիվ 1 համաձայնագրի, աշխատանքների ծավալների փոփոխության ակտի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող՝ կատարված աշխատանքների ընդունման հանձնման ակտի և կատարողական ակտի պատճենները:

Վերը նշված պայմանագրի օբյեկտի նախագծի, նախահաշվի, աշխատանքների ծավալների փոփոխության և կատարողական ակտերի ուսումնասիրությունից պարզվեց, որ դրանք կազմվել են վրացերեն և հայերեն լեզուներով, որոնց միջև առկա է անհամապատասխանություններ:

Մասնավորապես՝ օբյեկտի նախագծում գազի քանակության չափիչ է ցույց տրված RVG-100 հաշվիչ, մինչդեռ նույն օբյեկտի նախահաշվում, աշխատանքների ծավալների փոփոխության և կատարողական ակտում վրացերեն լեզվով ցույց է տրված RABO-160, իսկ հայերեն տարբերակում՝ RVG-110:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մ.Ո.Գ.-Շին» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության տարածքում՝ գազի ոլորտի օբյեկտներում աշխատանքներ չի կատարել, մասնագիտական փորձառության հանգամանքը Վրաստանի Հանրապետությունում կատարված աշխատանքներ են, հանձնաժողովը ուսումնասիրեց ՀՀ ՊԵԿ-ին ներկայացարած ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկում ցույց տրված աշխատանքների, այդ թվում կատարված ծախսերի առկայության փաստը և պարզեց, որ.

1. շահութահարկի հաշվարկում բացակայում է աշխատանքների կատարումից եկամուտներ հոդվածով աշխատանքների արժեք ցույց տալու հանգամանքը, այն դեպքում երբ №075/GArm/26_5.4_026/17.02.26 ծածկագրով մրցակցային ընտրության ներկայացրած հայտի հավելված 3.1-ով և 3.2-ով ցույց է տրվել 68344840.02 ՀՀ դրամի աշխատանքների կատարում,
2. ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկում բացակայում է աշխատանքների կատարման հետ անմիջականորեն կապված ծախսերի հոդվածով ծախսերի արժեքը կամ վերը նշված հաշվարկով ցույց չի տրվել կատարողական ակտում ներառված նյութերի, սարք-սարքավորումների արժեքը, բանվորների և վարչական աշխատողների աշխատավարձերը, մեքենա-մեխանիզմների շահագործման, այդ թվում վառելիքի ծախսերը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկում ցույց է տրվել «Ծառայությունների մատուցումից եկամուտ», «Ապրանքների մատակարարումից եկամուտ», «Մատակարարված ապրանքների սկզբնական արժեք» և «Ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսեր»:

Հանձնաժողովը որոշեց մերժել «Մ.Ռ.Գ.-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հաշվի առնելով, որ հայտում առկա են անհամապատասխանություններ, ինչպես նաև ներկայացրած հաշվետվությամբ (շահութահարկի հաշվարկով) բացակայում են «Մ.Ռ.Գ.-Շին» ՍՊԸ-ի մասնագիտական գործունեության և փորձառության առկայությունը՝ գազատարերի նորոգման աշխատանքներում:

«Արթշինստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով ներկայացրված տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին տեղեկանքը՝ հավելված 3.5-ը թերի է լրացվել և չի համապատասխանում մրցակցային ընտրության փաստաթղթերով պահանջվող տեխնիկական միջոցների քանակին:

Նույն կարգով կնքվելիք պայմանագրի կատարման համար «Արթշինստրոյ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը՝ հավելված 3.6-ը թերի է լրացվել և չի համապատասխանում մրցակցային ընտրության փաստաթղթերով պահանջվող հիմնական աշխատակազմի քանակին:

«Արթշինստրոյ» ՍՊԸ-ն մասնագիտական գործունեության և փորձառության չափանիշի գնահատման համար չի ներկայացրել նախկինում կատարված պայմանագրի պատճենը և նրա պատշաճ կատարման մասին տեղեկատվությունը: Հանձնաժողովը որոշեց մերժել «Արթշինստրոյ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ- 0:

«Գայսաթ» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջված փաստաթղթերի նվազագույն պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ -0:

Հանձնաժողովը որոշեց լրացնել գնահատման թերթիկը և հանձնել քարտուղարին.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ -0:

Հիմք ընդունելով գնահատման թերթիկը հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«Մ.Ռ.Գ.-Շին» ՍՊԸ –անբավարար

«Արթշինստրոյ» ՍՊԸ –անբավարար

«Գայսաթ» ՍՊԸ– բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ -0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության ընտրված մասնակից ճանաչել «Գայսաթ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ -0 :

## 2. Մրցակցային ընտրության արդյունքների մասին

Հանձնաժողովը որոշեց.

Անգործության ժամկետի ավարտից հետո Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, որը գտնվում է ք.Երևան Թբիլիսյան 43 հասցեում և կապալառու «Գայսաթ» ՍՊԸ-ի, որը գտնվում է ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Սաֆարյան 183Շ հասցեում, միջև կնքել աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագրի գինը կազմում է 117 660 582.97 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ -0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա. Լալայան |
| **Անդամներ՝** | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղցյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |
| **Քարտուղար՝** | | Ս. Բարսեղյան |

**№075/GArm/26_5.4_026/17.02.26 ծածկագրով մրցակցային ընտրության հայտի գնահատման թերթիկ 17.03.2026թ.**

| | Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները* | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Մ.Ո.Գ.-Շին» ՍՊԸ | «Արթշինստրոյ» ՍՊԸ | «Գայսաթ» ՍՊԸ |
| 1 | Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 2 | Բացված ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Անբավարար Բավարար | Անբավարար | Բավարար | Բավարար |
| 3 | Առաջարկված գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին | Անբավարար Բավարար | Բավարար | Անբավարար | Բավարար |
| 4 | Ներկայացված ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը, հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման թվաբանական ճշտությունը, առաջարկված գումարը չի գերազանցում նախնական առավելագույն արժեքը | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 5 | Ունի մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ | Անբավարար Բավարար | Անբավարար | Անբավարար | Բավարար |
| 6 | Նախորդ ժամանակահատվածում՝ տվյալ տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ընդհանուր ծավալը | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 7 | Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | Անբավարար Բավարար | Անբավարար | Անբավարար | Բավարար |

*Չափանիշներից որևէ մեկով «Անբավարար» գնահատական ստանալու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի. | | |
| Նախագահ՝ | | Ա. Լալայան |
| Անդամներ՝ | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղցյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |